

տանդինին է, որուն հետեւած են թէ՛ Առաքել Բաղդեղցին և թէ՛ անոր ժամանակակիցը Մկրտիչ Նազաչ:

Նազաչի այս քերթուածին մէջ ստէպ կը հանդիպինք այն օտար բուսերուն և ոճերուն՝ զորս կոստանդին ալլպիսի ալլաբանական և սիրոյ քերթուածներու մէջ գործածած է. մի քանի օրինակներ գին՝ Նազաչին.

« Զահր և լեղի », « Հասրաթ կայ յիմ որտիս », « մուշկ ու ամբար », « է՛ պատրի լուսին », « Է՛ լուսթթ ու քարաւ՝ », և այլն: Իսկ « Զինչ որ զեղեցիկ ծաղկունք » սաղը՝ ձեւուած է կոստանդինի ԺԱ և ԺԲ քերթուածներուն վրայ: Կոստանդին՝ այդ յիշեալ քերթուածին (« Այսօր եղև պայծառ գարուն ») մէջ՝ համառօտի գարունը կը նկարագրէ իր ծաղկներով. վարը կու գայ ի վերջոյ՝ Քրիստոսի գերը կատարելու՝ այդ Գարնան թատերարմին վրայ. և երբ այդ կոկոնը կը բացուի՝ միւս ծաղկները՝ որ գեո այդ կոկոնը չբացուած՝ խորհուրդ ըրած էին զայն կտրել՝ կը թառամին, կը փախչին, « և եղեն գեղին »:

Կոստանդինի քով, այդ վարը՝ Յիսուան է. իսկ միւս ծաղկները՝ որ խորհուրդ կ'ընեն զվարը կտրել՝ զՔրիստոս խաչել սուող բահանայք են:

Իսկ Նազաչի քով՝

Ծաղկունքն մարգարէն էին  
Նահապետ և սուրբք առաջին.  
Ծաղկէն որ յետ նոցին՝  
Ան Յիսուան էր Հօր Միածին, (և այլն):

Դարձեալ, Նազաչը « Նախ օրհնեմք զԱստուածութիւնն » Հարսանեաց Տաղին մէջ՝ շատ իմաստներ ունի և նոյն իսկ տողեր՝ առնուած է. Երզնկացոյ ընծայուած ԻԶ քերթուածէն: Կոստանդին Գարունը կը նկարագրէ, իսկ Նազաչ՝ անոր քանի մ'իմաստները առնելով՝ Հարսանեաց երգի կը վերածէ: Ահաւաստիկ օրինակ մը.

ՅՈՍՍ. ԵՐԶՆԿԱՅԻ

Ան հոռն զար գարնան  
Իր տեսն երեւի խնդման.  
Զինչ որ կայ պաշտոյ, պատան՝  
Ծաղկունք ամենայն բացուան:

Ան հոռն զար գարնան  
Փեռն տեսն էր խնդման,  
Յոր տեղ սերելէք որ կան՝  
Աճեն է հարսելք թող գան:

Միթէ ուրիշ բանաստեղծներ ալ ընդհակառակն՝ ազդուած չեն Նազաչէն: Այս հարցմանս պատասխանը դժուար է առ այժմ սալ. քանի որ գեո Տաղերը ամբողջութեամբ հրատարակուած չեն և անոնց կրած ազդեցութեան ազդերները ուսումնասիրուած չեն:

Միայն սա երկու տողերը

Գո մէկ հայելոց արժէ զբաշքն Մախն,  
Զէ Զինուամչին մէկ հայելուց գին՝:

Կը յիշեցնէ « Ծով աչք ամ քանի՛ նայիս » ի տողերը:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

## Գ Ե Պ Ի Զ Մ Մ Ա Ռ

Լիբանանու քղանցքին վրայ բազմած, մեղմօրէն աշխոժուած գարեւանդի մը վրայ, երբ Պէյրութ առաջին անգամ ցոյց կու տայ նաւուն վրայ կանգնած ուղեորին՝ իր մտքիչ արուարձանները, իր եւրոպական շքեղ պալատները, զորս կը ցրուէ կանաչութեան մէջ, արուեստի շնորհուն՝ բնութեան կախարակը կրկնապատկուէ համար, ուղեւորը Նիացմամբ կ'ողջունէ այդ նոր Ատիոթը, Աստրիքի Աթէնքը՝ լի պատմական յիշատակներով:

Այնքան հրապուրիչ է ան՝ որ բոպէ մը առաջ կը փափագիս ինքզինքդ այդ կանաչութեան հավանին սակ գանել:

Նաւը արդէն խարխիւր ձգած էր, բայց պէտք եղաւ սպասել, մինչև որ անցազրի բնութիւնը կատարուի:

Պէյրութ եւս է. Պօլսոյ պէս ազգերու

1. Մկրտիչ Նազաչի « Երբուն ի վարդն սաց » ի 9երորդ տուելը:

խուններամ բազմութեան կեցրոն մ'է. Եւրոպայի գրեթէ ամէն ազգերը հոս կամ գլորոց, կամ եկեղեցի, կամ հասարակութիւն մը ունին. իսկ Ամերիկացիք երեւելի համալսարան մը բժշկութեան ։ Բայց քաղաքին մէջ իրաւունք ուսումնական մեծ մամուռ կը վայելէ Գաղղիոյ պետական համալսարանը, որուն վարութիւնը Յիսուսեանց ձեռքն ըլլալով՝ հասարակօրէն Յիսուսեանց համալսարան կը կոչուի, բազմաճաշակ սպարանով մը՝ արեւելեան լեզուաց ։

Մեր նպատակն ըլլալով Զմմատու սրբափայլին այցելութիւն մ'ընել, շուտով թողուցինք Պէյրութի փոշուս և միանշամայն ազմատ ճամբաները, և գիմեղինք քաղաքին գէպ ի արեւելեան կայարանը ։ Շոգեկառքը հազիւ քանի մը քալը առած էր՝ երբ գտանք զմեզ լիբանոնեա ոսկմանին մէջ ։ Անցքը Պէյրութէն մինչև Ճունի՝ այնքան գեղեցիկ և հրապուրչ է, որ վայրկեանի մը մէջ կատարած ըլլալ կարծէի զայն, մինչ ժամ մը արդէն սահած էր ։ Յիրուի, շոգեկառքին մէջ չկային արաբացի կանայք, որ ինչպէս յեղեպտոս՝ մելամաղձիկ եղանակներով « Յակոր և Յովսէփ Նահապետաց իրարու հանդիպումը » երգելով՝ ճամբորդը գրաղեցրնէին, ոսկայն ուսուցանէին միտնակած պատուհանէն դուրս ուղղելով՝ կը տեսնէինք մէկ կողմէն լիբանանեա մօտաւոր լեռները, անոնց վրայ հիանալի զանազանութեամբ ցանուած Մարոնացիոց գիղղերը, և անթիւ վանքեր ու եկեղեցիները, միւս կողմէն ալ ծովը՝ սր գրեթէ շոգեկառքին անխոր կը թանար. և այս ամէն գեղեցկութիւնները կը ձգէին զմեզ անսակ մը հիացկատ թմրութեան և կամ տեսակ մը մրափի մէջ, որուն երազը կը կազմէին պատմութիւնը, անցելոյն յիշատակները ։

Ճունի՝ Պէյրութի և Հին Պիպլոսի մէջ գիւղաքաղաք մ'է, համանուն ծոցի վրայ, օրէ օր յառաջագեմ. աւանդութիւնը Յովնան մարգարէն կէտի փորէն՝ հոս գուրս ելած կ'ըսէ, լեռը շուտով եղնելու համար մենք վարձեցինք Չոբի մը, թէևս — ինչ որ սոյ գրեկորներու համար մեծագործութիւն մ'է — կառքի մաքուր ճամբայ մը՝ լեռն ի վեր քանի մը հարիւր մեզր բարձրութեան կը հանէ ։

Ճունիէն բաւական վեր եղնելով, սկսան պարզուիլ մեր առջև տեսարաններ, որոց մէջ ահաօրր, գոլորիկը և վայրենին մէկգմէկ գրկելով՝ սիրայի ներդաշնակութիւն մը կը յորինէին. ճամբուն ամէն քմահաճոյ պարձուածքին՝ բնութեան բարձէն սերիշ նոր և գեղեցկագոյն էջ մը կը բացուէր մեզ. հետուն սարաւանդեալ Պէյրութը — արբը գլխոյ մը՝ որ գէպ ի ծով կ'իջնէ — կանաչագեղ գաշտին մէջ սփռուած կարմրագարգ սուններ, մէկ կողմ՝ մեր մօտ մշակուած սիրուն գաշտեր ու պարտէզներ, միւս կողմ՝ իրոխա ժայռեր, որոնց բեկորք հեծեալին քայլերը կը դժուարացնեն, և այս նկարին յատակը կը կազմէր ծովուն կապոյտը, որ միանալով համապատկերին՝ աւելի ես կը շեշտը անոր վեհաթիւնը ։

Ճամբանիս կը շարունակենք. ուղեղարձէ մը՝ զմայլեցուցիչ պատկեր մը ես կը բացուի գէպ ի լեռն ի վեր ։ Մարոնցի ուղեկից մը կ'ուզէ ինձ արաբերէն բան մը հասկցնիլ. իր արտասանածներուն մէջէն միակ անուն մը — Պեղիսաշալոյ — ականջիս ծանօթ հնչեց ։ Ուղեկիցս ինձ կ'ուզէր ցուցնել Հայ Անտոնիանց վանքը, վեհատեսիլ բարձրութեան մը վրայ, որ ծառերէ շրջապատուած՝ թէ՛ ծովային և թէ՛ ցամաքային ափշեցուցիչ տեսարաններ կը վայելէ. բնութեան և առանձնութեան սիրահարներու համար միակ բնակավայր ։ Բայց, ափսոս, այդ վանքի մէջ այժմ մէկ Հայ կրօնաւոր իսկ չկայ. Մարոնցի ծեր մը անոր բանալիները կը պահէ ։

Մէկ ժամու չափ քալելէն վերջ՝ մեր ուղեկիցները բաժնուեցան մեզմէ ։ Ճամբան շատ մը վանքեր տեսանք, և մեր հարցման թէ « Այս է Զմմատ », անոնք կը պատասխանէին « Դեռ վեր, գեւ վեր » ։ Առաջնորդս լաւ տեղեկիչ էր ճամբաներուն, բայց վտանգ չկայ մուրեխու՝ թէեւ շատ մը ճամբաներ ըլլան, վասն զի ամենէն քարուտ և ամենէն ժայռուար կը տանի ի Զմմատ ։ Մենք այսպէս երկու ժամ քալելով, անցանք Մարոնցիներու քանի մը գիղղերու մօտէն ։ Անոնց առեւերը՝ առանց բացատրութեան՝ ամէնքն ալ քառակուսի քարերով շինուած են ։

խրաքանչիւրը մէկ մէկ ամառանոցի պաշտոններ կը թուին, նոր ածասկ ազուցանելի կզմինարներով կամ հարթ ասնիքներով, գաս վայրի մը կամ ժայրի կամ սեպ կէտի մը վրայ կարծես թեթեւակի ազուցուած՝ շատ բանաստեղծական երեւոյթ մը կ'ընծային ամուլ լերան : Թէեւ լեռը քարուտ և հողը քիչ, բայց լեռնցիք ափ մը երկիր շին թողած առանց մշակութեան, ուր կ'աճին շերամի թթնիկն և գինեբեր սրթը, — գլխաւոր հարստութիւնը Մարտոցույն — : Հոն կ'աճին նաեւ սևապարի (տճ. լամֆրատորը) անառններ, բարակ ու երկայն բունով և գազաթը միայն բիշ մը տերեւով, այնպէս որ ամբողջ անառաը կրնայ ըստի խոշոր հովանոց մը բազմաթիւ ննցուկներով : Մենք այսպիսի անառտի մը մէջէն անցնելով՝ հուսկ ուրեքն նշմարեցինք անկանոն ձևերով շինուած շէնքերու կոյս մը, նստած գեղեցիկ բարձրութեան մը վրայ և ցանցառ կանաչութենէ մը պատկուած : Չմնաու վանքն էր գա : — Երկիւղի մօտ ըլլալու համար պէտք էր այսչափ բարձրանալ : . . .

\*

Հոկտեմբերի կիրակի մ'էր, երկկոյնան գէմ, երբ մենք վանքի առջև կանգ առինք : Երբ ըստինք և ամաչութիւն պատած էր մեր շուրջը : Փոքր և բիւնէյի նմանող գոնէ մը երեսնի չափ Մարտոցիներ գուրս կ'ենէին, Չմնաու վարձուոր գեղացիներ՝ որոնք հայկական երկկոյնան պաշտաման ներկայ զըտնուած էին : Երիտասարդ աշխոյժ վարդապետ մը, Գերջ. Յոհան, աչիւ կերպերով զմեզ ընդունեցաւ, և քանի մը վայրկենի խօսակցութենէ յետոյ՝ ընդունելութեան սենեկի սեմին վրայ նշմարեցի բարձրահասակ գուարթագէմ՝ ձերուսի մի : Հարկ չիար ինձ ըսել թէ սա մեծաւորն էր, Գերայ. Արդեաւ Ա. Աղեքսանդրեան : Արդէն յաճախ ըսած էի իւր անունը, միշտ գովեստիք շրջապատուած, և իր համարը հրաւիրած էր զիս այդ լեռան գլուխը : Դա նշանաւոր գէմք մի է հայ կաթողիկեայ հասարակութեան մէջ. ժամանակաւ պատրիարքական քարտուղար եղած, իսկ այժմ՝ շատ տարիներէ ի վեր՝ քահանայացու աղօց պատրիարակութեան նուիրած

է ինքընքը Գերայ. Աղեքսանդրեան : Ռուսի այդ հասարակութիւնը, որ կը վայելէ Աղեքսանդրեանի ինամած պարտիզին պատուէն, պէտք է որ խնդրովառ մշակուցութեամբ մը մասնակցի անոր քահանայութեան յիսնամեայ Յորեղանին, որ այս ամիսներու մէջ կը կատարուի Չմնաու վանքին մէջ :

Չմնաուան Միարտութեան թէ՛ ներքին և թէ՛ արտաքին զարգացման մեծ դարկ տուած է Գերայ. Աղեքսանդրեան : Իւր իմաստուն մասնախարարութեամբ՝ վանքին կալուածները կրկնապատկեր է նոր սասցուածներով, և վանքին քարաշէնքը, որ միջնադարեան գղեկի մ'արտայայտութիւնն ունի, գուարթագուցած ու գեղեցիկացուցեր է. աղօց նընջարանն ու գասարանները, որ գետնափոր սրահի մը մէջ էին, նորակառու շէնքերով բարւոքած է և ընդարձակած, որոց լայն պատահաններէն լոյսը այժմ անվախօրէն ներս կը ճառագայթէ, սփռելով գուարթութիւն և առողջութիւն :

Բայց Գերայ. Աղեքսանդրեանի հայրական ինամոց ուղղակի աւարկայն՝ քահանայացու աղայքն են, սրոց վրայ յատուկ գուրգուրանք մ'ունի : Ընդհանուր գիտութեանց հասարակերը կ'աւանդուի անոնց, յետոյ փիլիսոփայութիւն և աստուածաբանութիւն : Հայերէն լեզուն շինողին կը սովորեցուի հոն, և եթէ այն կողմերուն կաթողիկեայ կղերին մէջ հայերենի անտեղեկ քահանաներ կան, անոնք են՝ որ Չմնաու գուրոցէն անցած չեն : Երկու Գաղղիացի Եղբայրներ գաղղիերէնի խօսակցութեան կը վարժեցընեն սղաքը, և Մարտոցի քահանայ մը, Հ. Փիլիպ, արաբերէն լեզուի գասախօսութիւն և փորձ կ'ընէր անոնց. վասն զի Չմնաու թեմերէն շատերն արաբախօս քաղաքներ են : Կայ նաեւ արմեկիստ մը աղայց արամայութեան տակ գրուած՝ երաժշտական փորձեր ընելու համար. հոն աղայց սիրաբ կը կրթուի և ճաշակը կ'ազնուականանայ : Չմնաու Միարտաններ Տանկաստանի գրեթէ ամէն քաղաքները սփռուած են : Նախկին քարոզիչները եթէ միայն իրենց սրբութեամբ պազարերէն, ներկայայնելը (չնորհիւ Աղեքսանդրեանի լուսամտ առաջնաբարութեան) սրբութեան հետ

գիտութիւնն ալ զուգեցին, որք արդէն անբաժան պէտք է ըլլան, ինչպէս լոյսն՝ արեւէն, կրօնքն պաշտօնէի մը վրայ: Աղքատներուն ինքնին ճշմարիտ գիտուն մ'է և խոր հմտութիւն ունի ազգային պատմութեան և աշխարհագրութեան մէջ. բայց իր քննութեանց առանձին առարկայ ըրած է Փոքր Հայքը, յորում և ինքն ծնած է: Պօրտը թերթերուն մէջ արդէն կեղծ սատրագրութեամբ՝ շարք մը կարեւոր յօդուածներ հրատարակելէն զատ, ունի բազմաթիւ անտիպ գրութիւններ, զորս առանձինն տպագրել տալու մտապիւր է. մենք անհամբեր կը սպասենք մանաւանդ արաբացի աղբիւրներէ քաղածին, որք ամենուն զիրամատչելի հեղինակներ չեն: Երջանիկ յիշողութեամբ մը օժտուած, Աղքատներուն անցեալ դարու առաջին քառորդէն մինչեւ ներկայ ժամանակ՝ Հայոց թէ՛ եկեղեցական և թէ՛ քաղաքական ղեպքերուն ալ կենդանի պատմագրութիւնն է: Իր խօսակցութիւնը, (զոր հանճարաբանութիւնը յանկուցիչ կ'ընեն, և իր հմտութիւնը) շահեկան և հաճոյական ընթերցման մի կը համապատասխանէ թողած տպագրութեամբը:


Ներկայացալեւ Զմեաթի վանքին մէջ զըտնուող քահանաներէն ճանչնալու պատիւ ունեցայ Տէր Ռաֆայէլը, Աստանայի քարոզիչ, Տէր Յովհանն, վարժապետ աստուածաբանութեան, և Տէր Մկրտիչ Մուրառեանը, վերակացու աղայոց, զոր արդէն ուրիշ տնոյ չորս ասրի առաջ ճանչցած էի՝ երբ Արեւելք կը դառնար Գերմանիայէն, ուր կատարած է իր ուսմանց ընթացքը:

Մեղամաղձութիւնը՝ զոր վանքին բանի մը սրահները կ'ազգեն՝ կը փարատի, զուարթութեան կը փոխուի, երբ կը գիտենք շէնքին առջեւ գտնուող սափարակ տանիքի վրայէն պարզուած աստարանը: Հեռուն Միջերկրականը՝ երբեմն նոսր մշուշով պատած և երբեմն իւր երեսին վրայ վէտ վէտ խաղացող ժպիտներով փայլիլուն. աջակողմցի ժայռի և քարի ամբաւութեան մէջ, որ լուսութիւնը կ'անձնաւորեն, խումբ մը ծառեր քեզի հետ կը խօսին. ձախակողմցի անդուդ մը որ ձայնիդ կը սպասէ արձագանգով մի զայն

քեզի պարձնելու համար. հարաւակողմցի Լիբանանու ուրիշ բարձունքներու վրայ գիւլեր և գեղեցիկ պալատներ, որոց ճրագունք գիշեր աստն աստղերուն հետ խառնուելով վարէն նայող անփորձ աստղաբաշխ մը պիտի շփոթցնէլին և նոր համաստեղութիւններ գտնելու պատրանքը պիտի տային անոր: Այդպիսի երեկոյ մը՝ այդ տանիքին վրայ պատիւ և բախտ ունեցայ խօսակցելու բարձրաստիճան անձի մը հետ, նախկին կաթողիկոսական — պատր. փոխանորդ, Գերպ. Աւետիս Արքիարեան արքեպիսկոպոսին, որ բանի մ'ամիսներէ ի վեր Զմեաթ կը բնակի:

Մեր խորին շնորհակալութիւնը մատուցանելով վանքին մէջ գտնուող ազնիւ վարդապետաց, սրտազին կը մաղթենք Գերպ. Աղքատներեանին իր Յօրեւանին առթիւ, որ այդ բազմարկուն Միարանութիւնը դեռ շատ տարիներ փայլի իւր իմաստուն առաջնորդութեան ներքեւ, իրեն ծարիւղատ գալուստ մը և պողպատի արուն մը, ի վարձ քրտնաջան Առաջնորդին և ի վայելումն Ազգիս:

Հ. Յ. Ա.



Ս. Պ Ր Ո Ց

տարակուսակամ բառի մը ընթերցումը

Աս Պ. Ստեփան Տերտերեան

Կ'առաջարկէք Ս. Գրոց (Գ. Մակար. Ա. 8) տարակուսական մա ծուկայրը մա տոկայրը կարգաւու կամ ուղղելու: Զուգարկիութեան մէջ կ'ընչ անցեալ տարի (1904), նոյնպէս Գեկու. մէջ, խոտորչուուն եկեղեցական մը այդ մա ծուկայրը (և ոչ թէ մա ծուկայր, ինչպէս դուք կը գրէք) կը փոփոխէր մա ժուժայր տեսնել: Սակայն բառական է բաղադրել այդ համար յոյն բնագրին հետ (սուրբ թարգմանուած է), հաստատելու համար՝ որ ոչ մա տոկայր և ոչ մա ծուկայր մեկնութեանց հարկ մը կայ, այլ ուղիւ կարգաւու համար՝ բառական և նետուել վերոյիշեալ Գրքին նոյն համարի (տպ. Բարք.) ձանթութեան մէջ յիշուած երկու ձեռագիր օրինակաց, և ուղղել նա սակայն ընդմէջ թուրքմայր (σδδαραϋς ηδδολατο πειδεδαι): — Թե՛ ինչպէս սակայնը տպու գրիչներէ Ծուկայր և կամ ծուկայրի փոխուել է՝ կարեմ ջննութեան նիւթ ընել շարժեր, թէ և անհասանելի չէ տեսնուի Արեւ Ուի փոխուելը և մաշած նի մը ստորին գլխին՝ ըր վերին գլխին հետ շփոթուելը, եթէ շտոնաւոր որ ոչ ամեն կայրեն զըրգորչներ՝ կայրեն լաւ կարգաւ գիտէին: — Ա՛նք զատ, տոկայր կամ ժուժայր՝ տեղադրելու մասուն ալ չի յարմարի, զի ուր բառերը զրկաւոր մը համարէլայ հասկերիլու գաղափար կ'ենթադրեն, մինչդեռ հոս տղի շտալու կամ յամառութեամբ մը վրայ և հասը:

Հ. Ա. Տ.